



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՅԱՆՔԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՐԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ 26 ՅՈՒԼԻՍԻՆ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ
ՔՐԵՏԵՆԹԱ ՀՈՎԻՏԻ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՒՅՄ ՄԷՉ**

Յառաջիկայ Կիրակի, 26 Յուլիսին, Քրետենթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ հիմնադրութեան 3-րդ տարեդարձին առիթով, Եպիսկոպոսական հանդիսաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի Unity Church of the Valley եկեղեցւոյ մէջ, Լա Քրետենթա, Կ.Ե. ժամը 1-ին:

Պիտի Պատարագէ եւ պիտի քարոզէ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան: Ս. Խորանին պիտի սպասարկէ եկեղեցւոյ հոգեւոր մատակարար՝ Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան:

**EPISCOPAL DIVINE LITURGY ON THE THIRD ANNIVERSARY OF
THE CRESCENTA VALLEY PARISH**

On Sunday, July 26th, 2009, the Armenian Apostolic Church of Crescenta Valley will celebrate its third anniversary. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will celebrate Divine Liturgy and deliver the sermon at the parish, which holds its services at Unity Church of the Valley. The service begins at 1:00 p.m.

Parish pastor Rev. Fr. Ardak Demirjian will assist at the altar.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳԼԽԱՒՈՐ ՀԻՒՊԱՏՈՍ ԳՐԻԳՈՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ
ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ**

Արեւմտեան Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Հինգշաբթի, 22 Յուլիս յետմիջօրէին, Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը Լոս Անճելըսի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեանի:

Խորհրդակցութիւնները ընդգրկեցին մեր գաղութը յուզող շարք մը հարցեր: Հայրենի դիւանագետը Առաջնորդ Սրբազանին ներկայացուց

հիւպատոսութեան կարգ մը ծրագիրները ու մանրամասնութիւններ հաղորդեց անոնց մասին: Ինչպէս միշտ՝ Առաջնորդ Սրբազանը պատրաստակամութիւն յայտնեց զօրակցելու հայրենանուէր ու ժողովրդանուէր աշխատանքներուն ու ծրագիրներուն:

PRELATE WELCOMES CONSUL GENERAL OF ARMENIA THE HONORABLE GRIGOR HOVHANNISYAN



On the afternoon of Thursday, July 22nd, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the Consul General of Armenia the Honorable Grigor Hovhannisyan.

During their meeting, the Prelate and guest discussed a number of issues concerning the community, and the Consul General briefed the Prelate on a number of projects the Consulate General has planned for the future. The Prelate reaffirmed his support and backing of the endeavors of the Consulate General.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ «ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»Ի ԱՏԵՆԱՊԵՏՈՒՅԻ ՏԻԿԻՆ ՍԱԼԲԻ ԱԳԱՐԱԿԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Չորեքշաբթի, 22 Յուլիս առաւօտուն, Ազգային Առաջնորդարանին մէջ ընդունեց այցելութիւնը «Հայկական Միջազգային Բժշկական Հիմնադրամ»ի (Armenian International Medical Fund) ատենապետուհի Տիկին Սալբի Ագարակեանի, որ տարիներէ ի վեր լծուած է հայրենանուէր ծառայութեան:

Յարգելի հիւրը առաջնորդ Սրբազանին ներկայացուց շրջագիծը այն աշխատանքներուն, զորս յառաջ կը տանի յիշեալ հիմնադրամը, օգտակար ըլլալու համար Հայաստանի մանուկներուն, որոնք լսողութեան դժուարութիւններ կը դիմագրաւեն: Այս հիմնադրամը կը գործէ աւելի քան չորս տարիէ ի վեր, ի մի բերելով հայ թէ օտար մասնագետներ:

Առաջնորդ Սրբազանը բարձր գնահատեց Հիմնադրամին աշխատանքը ու զօրակցութիւն արտայայտեց անոր: Ան նաեւ գնահատանք արձանագրեց Տիկին Սալբիին, որ այս հիմնադրամէն առաջ եւս, բժշկագիտութեան ու առողջապահական մարզերու մէջ երկարատեւ ծառայութիւն ունի մեր ժողովուրդին ու հայրենիքին:

PRELATE WELCOMES CHAIR OF THE ARMENIAN INTERNATIONAL MEDICAL FUND SALPY AKARAGIAN

On the morning of Wednesday, July 22nd, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy longtime community advocate and current Chair of the Armenian International Medical Fund (AIMF) Mrs. Salpy Akaragian.



Mrs. Akaragian briefed the Prelate on the work carried out by AIMF since its establishment four years ago and its pioneering procedures to help hearing impaired Armenian children and adults in Armenia through the efforts of Armenian as well as non-Armenian specialists.

The Prelate highly commended the humanitarian mission of the organization to providing a better quality of life to our brethren in Armenia, and also commended Mrs. Akaragian for her years of service to the community in her capacity as a nurse.

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՆՈՐԹ ԶՈՒԿՎՈՒՄԻ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Այլակերպութեան եւ Վարդավառի



տօնին առիթով, Նորթ Զուկվումի Զայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծխական համայնքը անցեալ Կիրակի ապրեցաւ պատմական օր մը, ընդունելով Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի անդրանիկ այցելութիւնը:

Առաջնորդ Սրբազանը եպիսկոպոսական անդրանիկ Պատարագ

մատուցանեց Նորթ Զուկվումի Զայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մէջ եւ այս առիթով շրջանի հաւատացեալներուն ուղղեց իր պատգամը:

Ս. Խորանին սպասարկեցին շրջանի հոգեւոր մատակարար՝ Գերպ. Տ. Միւռն Շ. Կրդ. Ազնիկեան ու Մոնթպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Աշոտ Քհնյ. Գամպուրեան:

Ներկայ էին Արժ. Տ. Խորէն Քհնյ. Պապօշեան, Ազգային Վարչութեան անդամներ, ատենապետ՝ Դոկտ. Կարօ Յակոբեան, Գալիֆորնիոյ Նահանգի խորհրդարանի անդամ՝ Փօլ Գրիգորեան, Յ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի, Յ.Օ.Մ.ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Նորթ Յոլիվուտի Յ.Յ.Դ. «Բարգէն Սիւնի» կոմիտեւութեան, Յ.Օ.Մ.ի «Մեղրի» մասնաճիւղի եւ ծխական շրջաններու քոյր եկեղեցիներու հոգաբարձական կազմերու ներկայացուցիչներ, երեսփոխաններ, հիւրեր եւ խումներամ հաւատացեալներ:

Յաւարտ Սուրբ Պատարագի, եկեղեցւոյ կից սրահին մէջ, եկեղեցատը Տիկնանց Միութեան կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ ժողովրդային ընդունելութիւն:

Հանդիսավար Տիկ. Սոնա Մատարեան, ողջունելէ ետք պաշտօնական հիւրերն ու ներկաները, յաջորդաբար բեմ հրաւիրեց եկեղեցւոյ յանձնախումբի ատենապետ՝ Տիար Խաչիկ Թիթիգեանը, Ազգ. Վարչութեան ատենապետ՝ Դոկտ. Կարօ Յակոբեանը եւ եկեղեցւոյ հոգեւոր Մատակարար՝ Գերպ. Տ. Միւռն Շ. Կրդ. Ազնիկեանը:

Բոլոր խօսք առնողները շնորհաւորեցին Նորթ Յոլիվուտի նորահաստատ ծխական համայնքը, բարձր գնահատեցին տարուող եկեղեցանուէր եւ կազմակերպչական աշխատանքները եւ հաստատեցին կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը Նորթ Յոլիվուտի շրջանէն ներս եկեղեցի եւ կազմակերպ համայնք ունենալու հրամայականին՝ շրջանէն ներս ապրող բազմազար ընտանիքներու հոգեւոր կարիքները բաւարարելու եւ հայապահպանման աշխատանք ծաւալելու համար:

Անոնք յոյս յայտնեցին որ սկսուած դրական եւ ժողովրդային խանդավառ այս մթնոլորտը հաստատ քայլերով պիտի առաջնորդէ սեփական եկեղեցի ունենալու երանական օրուան:

Առաջնորդ Սրբազանը փակման իր խօսքին մէջ գնահատեց եկեղեցւոյ հոգեւոր մատակարար Հայր Սուրբին, ծխական յանձնախումբին, Տիկնանց Միութեան նուիրեալ աշխատանքները:

Վեր առաւ սարկաւազաց եւ դպրաց դասի անդամ անդամուհիներու եկեղեցանուէր ծառայութիւնը եւ առհասարակ շնորհաւորեց Նորթ Յոլիվուտի հայ համայնքը, քոյր միութիւններն ու կազմակերպութիւնները, որոնք նեցուկ եւ զօրավիգ կանգնած՝ յառաջ կը տանին եկեղեցաշէն եւ աստուածահաճոյ աշխատանքները:

Սրբազան Հայրը կոչ ուղղեց, խօսքը գործի վերածելու եւ ստեղծուած խանդավառութեան գործնական օրինակ տալու նպատակաւ, ու այս առիթով հաստատեց հիմնադրամ մը՝ «Եկեղեցւոյ շինարարութեան Հիմնադրամ»:

Ան ըսաւ, որ Ազգ. Առաջնորդարանը կը հանդիսանայ այս հիմնադրամին առաջին նուիրատուն: Սրբազան Հօր օրինակին հետեւեցան քոյր եկեղեցիներու, միութիւններու եւ անհատներու նուիրատուութիւնները եւ գումարը հասաւ աւելի քան տասը հազար տոլարի:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութեան եւ գնահատանքի խօսք արտասանեց Սուրբ Պօղոս եկեղեցւոյ նուիրեալ Հովիւ՝ Հայր Նոյէլ Կորկիսի եւ զինք յուշանուէրով մը պատուեց:

(Պատարագի մանրամասնութիւնները տեսնել սոյն կայքէջի լրատուութեան բաժինին մէջ):

EPISCOPAL DIVINE LITURGY AT THE NORTH HOLLYWOOD PARISH ON THE FEAST OF TRANSFIGURATION

Sunday, July 19th, 2009 was a joyful day for the parishioners of the North Hollywood community as they welcomed H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on his first official visit to the parish. On that day, the Feast of the Transfiguration of our Lord was celebrated with Divine Liturgy celebrated by the Prelate, who also delivered the sermon and his well wishes to the community.



Assisting at the altar were parish pastor Very Rev. Fr. Muron Aznikian and pastor of Holy Cross Cathedral Rev. Fr. Ashod Kambourian. Participating in the services were pastor of St. Sarkis Church Rev. Fr. Khoren Babochian, member of the ARF Central Committee, California State Assemblymember Paul Krekorian, Executive Council chair Dr. Garo Agopian and members, representatives of

the ARS Regional Executive and members of community organizations.

The service concluded with the singing of the Cilician and Armenian National Anthems.

The faithful then headed to the church social hall where a reception organized by the parish Ladies Auxiliary took place. Master of Ceremonies Mrs. Sona Madarian welcomed the guests and invited Very Rev Fr. Muron Aznikian, Dr. Garo Agopian, and parish council chair Mr. Khatchig Titizian to deliver their remarks, all three of whom commended the progress the parish has witnessed since its establishment at the start of the year, and expressed hope for the parish to have its own church in the near future.

The guests also enjoyed a performance by Meline Hambartsumyan who presented traditional Vartavar songs.

In his message, the Prelate commended the commitment of the parish pastor, parish council, Ladies Auxiliary, altar servers and choir members, as well as all the community organizations that have supported and continue to support and contribute to the advancement of the parish. The Prelate then

announced the establishment of a new fund to assist in the future construction of a church, stating that the Prelacy was making the first donation to the fund. Representatives of various Prelacy parishes, members of community organizations, and individuals alike followed suit and pledged their donations, resulting in over ten thousand dollars being raised.

The Prelate also thanked Fr. Noel Gorgis, the pastor of St. Paul Assyrian-Chaldean Catholic Church, where the services take place, for accommodating the needs of the parish and presented him with a memento, thus bringing the reception to a close.

Please visit the news section of our website for the full press release and photos.

ՀՈԳԵՅԱՆԳԻՍՏ՝ ՕՂԱՆԱԻ ԱՐԿԱԾԻ ՉՈՐԵՐՈՒՆ, ԿԼԵՆՏԵՅԼԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Նախագահությամբ Արեւմտեան Թեմի Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ու մասնակցությամբ Թեմիս հոգեւորականաց դասու անդամներու, Երկուշաբթի, 20 Յուլիսի կէսօրէ առաջ ժամը 11ին, Կելնտէյլի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան յատուկ պաշտօն՝ անցեալ Չորեքշաբթի օր տեղի ունեցած օղանաւի ծանօթ արկածի զոհերուն համար: Ներկայ էին Իրանահայ միութեան, «Ջան Թաւրիզ»



միութեան ներկայացուցիչներ եւ աւելի քան 700 հաւատացեալներ:

Արարողութեան ընթացքին խօսք առնելով, Առաջնորդ Սրբազանը ոգեկոչեց յիշատակը անմեղ զոհերուն, կանգ առնելով վաստակին առջեւ Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամներէն Տոքթ. Լեւոն Դաւթեանի, որ զոհերուն շարքին էր: Ան նկատել տուաւ, որ զոհերուն շարքին էին հայորդիներ, որոնք հայրենիք կ'ուղղուէին

առաջին անգամ, տեսնելու Արարատն ու հաղորդակից ըլլալու հայրենիքին, սակայն դժբախտ արկածը խափանեց անոնց այդ առաջադրանքը: Ան իր ու Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Գագիկ Յովհաննիսեանի անունով ցաւակցութեան խօսք ուղղեց զոհերու հարազատներուն, նկատել տալով, որ գլխաւոր հիւպատոսը շուտով պիտի միանայ սգակիր հաւատացեալներուն, Եկեղեցւոյ սրահին մէջ արարողութեան յաջորդելիք հաւաքին:

Արդարեւ, հոգեհանգստեան պաշտօնէն ետք, եկեղեցւոյ «Արմենակ Տէր Պետրոսեան» սրահին մէջ տեղի ունեցաւ հոգետուրծ: Առաջնորդ Սրբազանը անձամբ ցաւակցութիւն յայտնեց այն ընտանիքներուն, որոնց հարազատները զոհ գացած էին աղետալի արկածին, աղօթելով, որ բարձրեալն Աստուած Ս. Հոգւոյ մխիթարութիւնը շնորհէ սգակիրներուն:

Հոգեհանգստեան արարողութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբթի օր, որովհետեւ Կիրակի օր մեր եկեղեցւոյ տաղաւարներէն՝ Վարդավառի տօնն էր: Այդ օրը, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Տէր Ողորմեայի յատուկ աղօթք, ի հանգիստ զոհերու հոգիներուն:

REQUIEM FOR PLANE CRASH VICTIMS OFFERED AT ST. MARY'S CHURCH

On the morning of Monday, July 20th, 2009, requiem service for the victims of last week's plane crash in Iran was offered at St. Mary's Church in Glendale. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the service, in which clergy members participated.



Among those participating in the requiem service were representatives of the Armenian Society of Los Angeles, members of the "Jan Tavriz" Committee, and over 700 faithful.

During the service the Prelate offered prayed for the repose of the souls of the victims, among them Dr. Levon Davtian, member of the Catholicosate Central Executive. On behalf of the Consul General of Armenia the Honorable Grigor

Hovhannisyan, who would be joining the mourners at the ensuing gathering in the church hall, the Prelate expressed his condolences to the families of the victims, praying for the Holy Spirit to bring them comfort and solace as they mourn the tragic loss of their loved ones.

A coffee reception in memory of the victims took place at "Armenak Der Bedrossian" Hall following the requiem, during which the Prelate comforted those who lost family members in the tragedy.

The service took place on Monday since Sunday, July 19th, was one of the five major feasts of the Armenian Church, the Transfiguration of our Lord, thus requiem could not be offered. Instead, special prayers were offered in all Prelacy Churches during Divine Liturgy.
